

Ն. ԱԳՈՆՑԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԱՌԵՐԻ ՎԱՅԵԼՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուղղագրության 1922 թ. ռեֆորմի իրականացումից հետո մեր հասարակայնության մեջ երեււած էին տրտուներն ու առարկություններ, այնպես որ ՀՍԽՀ գիտության ու արվեստի ինստիտուտին հանձնարարվեց հատուկ հանձնաժողով ստեղծել՝ րազմակողմանիորեն քննելու և վերջնական ու նոր նախագիծ պատրաստելու հայոց լեզվի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխման վերաբերյալ, Հանձնաժողովը, որի կազմում էին Լեոն, Աճառյանը, Մանանդյանը, Շիրվանդագեն և ժամանակի ականավոր ուրիշ հայագետներ, իր աշխատանքներն սկսեց 1926 թ. հոկտեմբերից. լսվեցին Հ. Աճառյանի, Նտ. Մալխասյանցի, Գր. Ղափանցյանի և Ա. Խաչատրյանի համաձայնագրեց զեկուցումները. շորսի առաջարկությունների հիման վրա կազմվեց համադրական աղյուսակ և 1927 թ. փետրվարին կարծիքի ուղարկվեց Միության և արտասահմանի անվանի հայագետներին, Ն. Ագոնցի դիտողություններն ահա արձագանք են հիշյալ հրավերի:

Հանձնաժողովի աղյուսակը, որին կետ առ կետ պատասխանում է Ն. Ագոնցը այս դիտողություններում, տպագրված է ինչպես առանձին, այնպես էլ ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի հայոց լեզվի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխման հանձնաժողովի տեղեկագրում (Երևան, 1927, էջ 94—96): Ավելորդ գտանք հատուկ ծանոթագրությունների միջոցով արտագրել նրա առանձին կետերը, քանի որ հետախնդիր ընթերցողը մատնանշված հրատարակության մեջ հեշտությամբ կարող է գտնել ցանկացած հատվածը:

Ինչ վերաբերում է Ն. Ագոնցի և ականավոր հայ նկարիչ Վարդգես Սուրենյանցի համադրածակցությամբ 10-ական թթ. ստեղծված հայերեն նոր տառատեսակներին, «Հաղարան բլրով» հեքիաթի վերամշակմանը, բնագրի տպարանական շարվածքին և, վերջապես, հեքիաթի մոտիվներով Սուրենյանցի արած նկարազարդումներին, ապա դրանցից ոչինչ հնարավոր չեղավ գտնել: Ցանկալի է, որ հայ արվեստի պատմաբանները որոնումներ կատարեն այդ ուղղությամբ:

Դիտողությունների բնագիրը պահվում է գրականության և արվեստի թանգարանում:

Պ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մեծարելի նախագահին,

Որպես պատասխան պատվական Հանձնաժողովիդ դիմումի, պատիվ ունիմ ղրկելու Ձեզ կից համեստ նպաստ ուղղագրական և տառերի վայելչության խնդրին: Ցանկամ հաջողություն:

Ընդունեցեք հարգալից ողջույններս:

Ն. Ագոնց

18 ապրիլի 1927, Պարիս
15, rue Henri Martin 15, Paris 16^e

Ն. Ագոնցի այս գրությունը երկու անշան կրճատումով հրատարակելով՝ խմբագրությունը նպատակ չունի վերաբարձել հայոց լեզվի ուղղագրության խնդիրը, որը ժամանակին իր լուծումն է ստացել, այլ ընթերցողին ներկայացնել այն գիտական արժեքավոր դիտողությունները, որ արել է նշանավոր հայագետը հայերենի հնչյունաբանության և տառերի վայելչության վերաբերյալ:

ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՒԽՆ

Ստացա աղյուսակդ: Այս առթիվ պարտք եմ համարում ասել հետևյալը: Ուղղագրությունը մեկեն ավելի պահանջներ ունի իր առաջ, որոնց բոլորին պարտավոր է զոհացնել: Բացի հնչական հավատարմությունը, որ պահանջում է լեզվագիտությունը, բացի միակերպությունը, որ կարևոր է մանկավարժական տեսակետից, կա և այլ հանգամանք, որ հաճախ մոռացվում է վերանորոգիչների կողմից. այն է՝ լեզվապատմական պահանջ, որի հիմամբ գիրը պետք է պատկերացնեն լեզվի ամբողջությունը գեթ այն չափով, որքան արգելք չեն հարուցանում մյուս հիշյալ պահանջները:

Նոր գրական լեզուն կապված է սերտորեն գրաբարի և աշխարհաբար բարբառների հետ: Երկու դայակներից մեկը գրեթե զոհ գնաց քաղաքական ծախողանքի, և կենդանի բարբառների մնացորդները այսօր անտուն, անտեր թափառում են կորստյան և աղավաղման ճանապարհների վերա:

Մնում է հին լեզուն, որպես մայր և սնուցիչ նորի: Մոտիկ անցյալի վեհերը գրական լեզվի դարգացման շավիղների շուրջը շարդարացրին նրանց հեղինակների գուշակությունները: Գրական լեզուն, պահելով հանդերձ իր ինքնուրույնությունը, բնավ պետք չտեսավ հրաժարվելու իր պատմական ժառանգությունից և լայնարձակ շահավետեց հին լեզուն: Արդի լեզուն կիսով չափ գրաբար դարձավ. և հին շտեմարանը դեռ սպառված չէ նոր գրականի համար:

Այս նկատումով խոտելի է այն ամենը, ինչ որ խտրոց է ծառայում հնի և նորի մեջ:

Եթե աշխարհաբարը սեփական ուղղագրություն մշակե, որպիսին է այժմյան պաշտոնական նորածն ուղղագրությունը, բնական է, որ արտաքուստ պիտի անջատվի իր մորից, պիտի դժվարեցնեն հնի ուսուցումը, որով ամենից առաջ և մեծապես վնասելու է աշխարհաբարի շահերին:

Ահա ինչու համար չի կարելի բարեկամ լինել այն ուղղագրական հեղաշրջումների, որոնք այլ բան չեն, եթե ոչ լեզվական բռնություն:

Ինչ և լինին հայ գրի թերիքները, ամեն դեպքում նա այն սակավաթիվ օրինակներիցն է իր հասակակիցների թվում, որ կարիք չունին արմատական փոփոխության: Քաղաքակիրթ լեզուների գրեթե բոլորի մեջ վաղուց բացված է անանցանելի խորխորատ լճի և հնչյունի միջև: Թևպետե դյուրության մասին սրտացավները պակաս չեն, քան մեղանում, դարձյալ չեն նկրտում ուղղագրական բուռն խիզախումների, պահում են հին՝ շատ դեպքերում գրեթե գաղափարագիր դարձած գրությունը, որպեսզի չեղծեն լեզվի պատմական պատկերը և մոռացության շտան այդ լեզվով ամբարված դարավոր հարստությունը, անցյալի ճոխ գրականությունը, վնասելով նրա մատչելության:

Եթե զորավոր լեզուները այսքան զգույշ են և սիրում են մնալ կառչած իրենց անցյալին, որքան ավելի իրավունք ունի մեր տկար և անպաշտպան լեզուն նույնն անելու, մանավանդ որ իր գոյության համար ուրիշ ավելի զորեղ և վստահելի խարիսխ չունի, քան իր անցյալը:

Կասկած չունիմ և ուրախ եմ, որ ճիշտ այս տեսակետն ունի և պատմական Հանձնաժողովը, որի հետևանքով և վերաքննության գործը դրված է պատմական և ավանդական հողի վերա: Հանձնաժողովը ջանացել է և հաջողել վերականգնել Մեսրոբյան ուղղագրությունը ընդդեմ նորամուլ ոտնձգությունների, ինչպես կարելի է տեսնել Համալրական աղյուսակից: Սակայն այստեղ, այս

խնամքով մշակված գործի մեջ, կան սայթաքումներ, որ թվում է, թե մի տեսակ զիջումն են նոր ուղղագրության, և չէի կամենալ անձամբ թողնել առանց ուշադրության: Խոցելի եմ համարում ամենից առաջ 14 և 15 կետերը:

14 կետը առավելություն է տալիս վ (վեիս) ընդդեմ Վ (Հյունի) և ու-ի:

Միանգամայն ապօրենի եմ համարում այս աչառու վեասիրությունը: Երեք գրերի գործածությունը հին և նոր գրական լեզուներում այնքան պարզ և որոշ է, որ թյուրիմացության տեղիք չէ տալիս: Հյունի Վ հնչյունը նույնքան հին է, որքան և վեի: Այն հանգամանքը, որ հյունը կազմում է ու ձայնավորը և իւ երկ-բարբառը, բնավ հիմ չէ, որ նա զրկվե իր հինավուրց Վ ձայնից: Այս որոշումը զարմանալի է, մանավանդ որ Հանձնաժողովը հնարավոր է գտնում ու և իւ փոխարինել միատառով րստ 23 կետի:

Ասել է թե հյունը վտարվում է հայ այբբենարանից: Անարդար հալածանք: Վեի գործածությունը շատ սահմանափակ է: Մի քանի տասնյակ բառեր, այն էլ մեծ մասամբ իրանական փոխառություններ, որ ունին սկզբում վ-, հետո -ով վանկը, կազմում են սույն տառի ամբողջ հաշվեկշիռը: Միևնույն ժամանակում րառեր կան Վ-ով: Թողնենք այլ նկատումները, առնենք միայն թվական պարագույն. ի՞նչ կարիք կա այլայլելու հիմնովին մեր դրության պատկերը, բազմաթիվ Վ-երը վեր ածելով վ-ի, այսինքն մեծամասնությունը զոհելով փոքրամասնության: Արդարամիտ դատաստան չէ և ոչ հաշվտես քաղաքականություն:

Ոչ միայն հյունը, այլ անգամ ու-ի Վ հնչյունը՝ ձայնավորի նախադաս, փոխել վեի անընդունելի է:

Անցյալներում ուրիշների թվում ես ևս կարելի էի գտնում ձայնավորից նախադաս ու-ն սղել Վ-ի:

Անգամ այս թեթև նորաձևությունը, որ զեթ տնտեսական արժեք ուներ, ժողովրդականություն չգտավ և նախկին ու-ն պահեց իր դիրքը: Հանրության հոտառությունը նաև ուղղագրական խնդիրներում անտես առնելու չէ: Ու-երի սղումը Վ-երի կարծես խճողում է լեզուն նոր քաղաձայնով և վնասում նվազայնության: Մեր լեզվի թերություններից մեկը հենց քաղաձայնների կուտակումն է և նրանց թիվը նորեն զորացնել՝ ցանկալի չէ: Թվում է թե մի երանգ կա հատված կամ հատաժամ հատուած արտասանության մեջ. մեկը՝ ակամայից պիտի հնչվի հատված, հատ-ւած, կամ հա-տը-ված, հա-տը-ւած, մյուսը՝ հա-տուած, աւ-տուած, այսինքն ՎՊՈ ուսերեն ՄՅՈ և ոչ Մ-ՅՈ, ինչպես արտասանում են հայերից շատերը:

Համենայն դեպս հատաժամ զերադասելի է քան հատված, եթե միայն ուտիպված ենք թողնել պապենական հատուածը:

Վերջապես մոռանալու չէ մանավանդ Հանձնաժողովը, որ շահագրգռված է նաև տառերի վայելչության խնդրով, որ ամփոփ հյունը անհամեմատ ավելի հարագատ է հայ գրերի ոճին, քան երկարաձիգ վւը :

Այսպես Վ- հնչյունի եռակի գրությունը -վ՝ բառերի սկզբում և ով վանկում, ու՝ քաղաձայնի և ձայնավորի մեջ (լեզուի, հատուած) և Վ՝ մյուս դեպքերում, մանավանդ ձայնավորների մեջ (հրաւեր=հրա Վաււււ, Արշաւիր=արշա) ահա մեկուկես հազար տարի է, որ ոչ մի անպատեհություն չեն հարուցել, խաղաղ ապրել են իրար կից և այժմ էլ նոր լեզուն բողոք չունի նրանց դեմ: Ձենդ այբուբենը նույն երեք գիրն ունի՝ ջ՝ Վ, ու, ջ՝ Վ, Վ, ի, -վ, որ է նույն

կրկնակի ց + պո:՝ 1): Տառերի բարեփոխության ժամանակ կարելի է վերագրությունը մոտեցնել կրկնակի ւ, կարճելով նրա ոտները և նրա դեմ հալածանքը կմեղմանա:

(Իսկ եթե բուռն բաղձանք կա տառերի թիվը կրճատելու, զոհը պիտի լինի վեր, որովհետև ամենևն քիչ գործածությունն ունի: Այն ատեն բառասկզբում եւ գրելու է ւ, իսկ ուից հետո ու, ինչպես ֆր. ալ և ձլ:

Սակայն դժվոր թե ստիպողական պետք այս տնտեսության):

15 կետը նմանապես խոտելի եմ համարում, ուր առաջարկվում է ոչ երկ-ձայնը րնդլայնել ույ:

Հայտնի է, որ աշխարհիկ բարբառներից և ոչ մին չէ խնայել հին երկ-ձայնները՝ ալ, եւ, իւ և ոլ: Սրանց փոխարեն ունի պարզ ձայնավորներ՝ է, ե, ի, ու (կամ ու — ֆրանս. ու):

Գրական լեզուն հետևելով գրաբարին վերականգնացրել է հին երկբարբառները և յուրացրել հին լուս = lous հնչյունը փոխանակ աշխարհիկ լիս կամ լուս, լուս ձևերի: Արդ ի՞նչ բանավոր հիմք կա հին լոյսը փոխել լույսի և ինչ առավելություն: Եթե առաջարկվեր վերականգնել աշխարհաբարի իրավունքը և ամենուրեք հին երկբարբառը դարձնել ու պարզ ձայնավորի և գրել՝ լուս, ճկութ, երևութ, բութ (փոխանակ՝ լոյս, ճկոյթ, երևոյթ, բոյթ), այս հասկանալի կլիներ, գուցե և հավանելի: Բայց պահել հին հնչյունը և փոխել նրա բրազործված գիրը, նշանակում է ավելորդ շփոթ հարուցանել և դատել միմյանցից հին և նոր գրական լեզուները: Ենթադրյալ դյուրությունն էլ կասկածելի է և մանավանդ պարզությունը: Դժվար է համոզել, որ երեք տառ ույ հաճելի է քան երկտառ ոլ:

Այս հեղաշրջումն անշուշտ այն նպատակն ունի, որ ոլ-ին վերապահի ոյ հնչյունը: Բայց արդյո՞ք պետք կա այս հնչման: Ամբողջ հայ բառարանում մի հատ բառ կա ոյ հնչումով՝ խոյ, գուցե և կասկածելի կոյ (փոխանակ կու-ի): Մի բառի համար հեղհեղել հին ուղղագրությունը, նշանակում է դարձյալ նույն սխալն անել, ինչ որ ւ-ի և վ-ի նկատմամբ, այսինքն մեծամասնության շահերը զոհել: Սա շինարարական գործ չէ:

Հայ լեզուն հույս է կապում ույ գրությունից. այսպես գրաբարի անցյալ անկատարի երրորդ դեմքը հեղուլ, զենուլ և նման բայերի՝ (զենուի, զենուիր) զենուլ-ը գրվում է զենուլը, երբեք զենուլը: Այստեղից երևում է նաև, որ հին ույ շատոնց հնչվում էր ոյ. պահել այժմ էլ հին գրությունը և արտասանությունը ոչ մի անպատեհություն չի ներկայացնում: Նոր հունարենը պահում է հին ւ, օ, օ, ա գրությունը, թեև արտասանում է միակերպ 1 հնչյունով: Խոսքը և գիրը շատ հին և համեմատաբար դաշնակիցներ են. և ոչ միայն ականջը, այլև աչքն իր իրավունքներն ունի գրության մեջ և ուղում է այն պահել և այնտեղ ավելի բան տեսնել, քան ականջն է լսում:

10 և 18 կետերը առաջարկում են զեղչել բառերի վերջում -յ գիրը, ուրեմն դրել՝ վկա, սափո:

19 կետում նախատեսվում է նաև հապավել -յ- ա և ի ձայնավորների միջև: Միայն ոչինչ չէ ասված, արդյո՞ք ո և ի ձայնավորների մեջ -յ- ևս զեղչելու է. վկա, վկաի, իսկ սաքո, սաքոի թե՛ սաքոյի: Ենթադրվում է որ ա և ւո, ա և ու, ւս և լ, ձայնավորների միջև -յ- պահվում է: Այս առաջարկով գրելու

է՝ վկա, վկաի, հավանորեն և Աաբռ, Սաբոի, բայց վկայով, վկայում, վկայէ, սաբոյով, սաբոյում, սաբոյէ:

Այս կտնոնը հետևողական չէ և ոչ էլ համաձայն հայ հնչաբանության, որ չէ հանդուրժում ձայնական հորանջ (hiatus) ընդհանրապես: Բացառական հոլովի երկու ձևերից մեկը դրել առանց -յ-ի, մյուսը -յ-ով՝ վկա՞րց և վկայէն, չէ նշանակում դյուրացնել ուղղագրությունը: Ինչպես ասացի, հայը չէ կարող արտասանել երկու կից ձայնավորը առանց միջնորդ -յ-ի կամ -ի նայելով երկրորդ ձայնավորին: Ճիշտ այնպես, ինչպես անընդունակ է երկու կից բաղաձայն հեղել առանց միջանկյալ ը-ի: Այս հիմնական օրենքը հայ հնչաբանության հարկադրում է հրաժարել 19 կետից և դրել՝ վկայի, վկայով, վկայեն, սաբոյի, սաբոյեն կամ ազդարիս և այլն:

Ընդունելի է -յ-ի հապավումը լոկ ուղղականում եզակի և հոգնակի՝ վկա, վկաներ, սաբո, սաբոներ:

Այս ինգրի հետ կապ ունի իսկապես 3 կետը, որը հանձնարարում է վերահանգ Ե հնչյունը դրել է: Պետք է հուսալ, որ հետևողականության աղաքավ առաջարկվեր դրել վերջին Ե ոչ թե է ինչպես ընդունված է գրաբարում, այլ Ե, ղեղչելով է (— ե + յ)-ի ՝ որպես վկա-, սաբո, փոխան հին վկայ, սաբոյ=հա-ւոյ: Հետևապես պետք էր գրել՝ բազե, նաե՛ն, մարդարե: Հետևությամբ վկա, վկայի, սաբո, սաբոյի, թեք հոլովներում գրելու էր բաղնի, բաղնյով, որ է բաղնի, բաղնով (է = եյ): Այս դեպքում մնում է ուղղակիում ևս գրել բազէ և ոչ բազե, հանուն միօրինակության:

Եթե անգամ ընդունելու լինենք, որ և չէ խուսափում hiatus-ից և ուրեմն ներելի է գրել՝ բաղնի, մարգարեով, մարգարե ական (համաձայն գրաբարի սիրնի, սիրեիր, սիրեաք, սիրեիր հին գրության), այն ժամանակ ե ո (= էո), ե՛ա (= էա) հնչյունները պիտի շփոթի տեղիք տալին, քանի որ եա = յա ըստ 21 կետի և եո = յո ըստ 22:

Միակ լուծումն է հաշտվել ավանդական ուղղագրության հետ համաձայն 2 և 3 կետերի:

5 կետը պաշտպանում է հակառակ 4 կետի է-երը բայերի -էր, էք վանկերում: Գրաբարի -էր և -էք ստուգաբանական հիմն ունին՝ սիր-էր < սիրե— *լ-ԵՐ, Խոյար < *ա-լ-ԵՐ: Աշխարհաբարն ունի՝ աղամ, աղաս, աղաւ և ոչ աղալը: Հետևապես և սիրեմ, սիրես, սիրեր և ոչ սիրելը—սիրէր: Նմանապես աղայք, սիրևք փոխված է աշխարհաբարում՝ աղալ, ուրեմն սիրեմ: Ասել է թե աշխարհաբարը չ ղեղչում է, որով և սիրեր, աղար, սիրևք, աղաք՝ գրություն արդարացվում է ստուգաբանորեն: Եթե հներին հետևելով թույլ տալինք hiatus եչի վերաբերյալ, կունենալինք նրանց նման՝ սիրելի, սիրելիք և (փոխանակ սիրէր ձևի) սիրեր, սիրելիք և այլն: Ներկայում ևս՝ սիրեմ, սիրես, սիրե, սիրենք, սիրևք, որպես՝ աղամ, աղաս, աղա, աղանք, աղաք: Որոշ չէ, արդյոք աղա գրությունը առանց -յ-ի մտնում է 13 կանոնի մեջ թե չ թողնվում է գրել ըստ հին ուղղագրության: Եթե հանձնարարվում է գրել աղա, ապա պետք է գրել և սիրե (փոխառ սիրէ) հակառակ 3 կետի:

Լ-երի խնդիրը, մանավանդ վերջահանգ է-երի պետք ունի վերաբնություն:

4 կետի տրամադրությունը միայն ընդունելի է, որ որքան հնար է կրճատել է-երի գործածությունը, բայց ոչ այնպես կտրուկ, ինչպես ձևակերպված է կանոնը, այն աստիճան, որ շփոթեն սեր և սէր, ղէտ և գետ և նման բառեր:

Մի շարք բառեր կան, որ բարավոր է ե-ով դրել, ինչպես երբեք, մեկ (<միակ), հեր, աղետ, թերևս բայերի մեջ և այլն:

11 կետը ծանր վճիռ է կայացնում խեղճ և մի հատիկ ուլ դերանվան հանդեպ, բաժանում է նրան իր զուգորդ ու-ից և զոհում օտար բառերի հաճույքին, որպիսին է օվրեստէս: Քանի որ ով բացարձակ եղակի է, նրա դրուխտը փոփոխությունը հայ ուղղագրությունը ոչինչ չէ շահում, այլ միայն հրաժարվում է հին անմեղ ավանդից: Օտար բառերի մասին ստորև:

23 կետի նախագծված միատառ գրերը ու, իւ, եա հնչյունների համար սովելորդ եմ գտնում, ինչպես և բնավ ցանկալի չէ և փակագրի գործածությունը ոստ 14 կետի ծանոթության: Տպագրության մեջ լավ կլինի և փոխարինել եւ-ի: Գրաչարի գլորոցների թիվը շատուցնել ավելորդ փակագիր տառով, նշանակում է ծանրացնել շարելու գործը: Հայ այբուբենը առանց էն էլ բաղմատառ է:

Գրեթե բոլոր կետերին, գլխավոր կանոններին անդրադարձաւ: Իմ հայացքներս չեն տանում դեպի արմատական փոփոխությունների կողմը: Ոչ թե նրա համար, որ բնական խորշանք կամ նախապաշարում ունիմ նորամուտության հանդիման: Ոչ դուտ լեզվագիտական, ոչ մանկավարժական և ոչ անգամ գործնական որևէ լուրջ հիմ չեմ տեսնում շեղվելու ավանդական ուղղագրության սկզբունքներից: Եթե արդի մանուկ լեզվի շահը պահանջեր, կանցնեի առանց տատանվելու բոլոր հիշյալ կամուրջները: Սակայն հենց այդ շահի գիտակցությունն է, որ հակառակն է թելադրում: Պահել, պահպանել ամեն կարգի կապեր մայր լեզվի, հին գրական լեզվի հետ՝ աշխարհիկ լեզվի կենսական շահերից էականն է: Նոր գրականում չկա ոչ մի հնչական տարր, որ անծանոթ լինի գրաբարին: Այս մի հաստատուն հիմ է ուղղագրական համերաշխության: Անգամ կրավորակաւ բայերը, որ թվում է թե հատուկ են միմիայն աշխարհաբարին, ունեն իրենց նախատիպը գրաբարի՝ հատուած, յօդուած և նման ձևերում: Իսկ գրաբարի՝ հոգւոյ, գինւոյ գրությունը արդարացնում է աշխարհաբարի՝ հանվում եմ, ասվում է ուղղագրությունը: Իմ եղրակացությունս այն է, որ արդի ուղղագրության մեջ ներելի են այնպիսի սրբագրություններ և գուցե հարկավոր, որոնք ընդունելի են նաև գրաբարի տեսակետից, այնպիսի սրբագրություններ, այնպիսի մասնակի ուղղումներ, որոնք չեն խախտում, չեն կտրում նորը հին հետ կապող օղակները: Միայն ծայրահեղ ստիպողական հարկը կարող է արդարացնել այս սկզբունքի խաթարումը:

Ինչպես ամեն լեզվում, մանավանդ դառնալով լեզուներում, գրաբարի մեջ ևս կան անհարթություններ, շեղումներ ուղղագրական կանոններից: Նրանցից շատերն անցել են աշխարհաբարին: Ձգտել կոկել ամեն մի անհարթություն, որ իր պատմական նստվածքն ունի, վտարել այն, ինչ որ խոչընդոտ է թվում. նշանակում է կենդանի լեզուն հասցնել արհեստական վոլայայուկի տառադրության: Ցանկալի է միակերպությունը, բայց արհամաբելի չէ բնավ և պես-պեսությունը: Ամեն բան իր չափն ունի և միօրինակությունն էլ պետք է ազատ պահել տարտամ շարվոններից: Յ-երի ղեղը կամ փոխարինումը Վ-ով, որ նախատեսում են 16 և 17 կետերը, ինչպես և սեր և սէր, հօտ և հոտ և նման հոմանունների հավասարեցումը համաձայն 4 և 9 կետերի—սրանք թելադրանք են այն շեշտակի շարվոնականության, որ իմաստն անգամ զոհվում է ձևին: Եվ ցավալին այն է, որ շարվոնը ձևակերպված է, թվում երբեմն օտար բառերի աղղկություն տալ:

Օտար բառերի ուղղագրությունը

Մտադիր չեմ եկամուտ բառերին տալ այն պատիվը, որին արժանացրել է Հանձնաժողովը ծայրահեղ ներողամտությամբ։ Ուղղագրական ցուցակի մեջ օտար բառերը վայելում են համաքաղաքացիական հավասար իրավունք և հարպի տեղ են բռնում հայրենի աթոռների վերա։ Հարազատ ում դերանունը նստած է այնտեղ, ուր անծանոթ օվրեստը, էգ բառը ընկեր է էֆսպեւտ և էպիստոն անուններին, ոչ երկրարբառը դառնում է ույ օտար օյ-ի դրդմամբ։ Հայ բառերն են, որ խոնարհվում են եկվորների առաջ, որ նրանց հաճույքով միենուն գիրն ստանան։

Հաճելի չեն ցուցակի վերնագիրները՝ «եկվուպական» այս կամ այն հնչյունը, որ կարող է կարծել տալ, իբր թե վերաբնությունը նպատակ ունի համակերպել, հարմարացնել հայ այբուբենը եվրոպական հնչյուններին։ Մինչդեռ կուզեմ հուսալ, որ հարցը լատին տառերով արտահայտված հնչյունների մասին է և քննելի նյութը եվրոպական հնչյունները չեն, այլ հայ հնչյունների և նրանց գրերի փոխհարաբերությունը։

Յուրաքանչյուր լեզու ուղղագրական ներդաշնակ սխառն կարող է մշակել միայն իր սեփական բառամթերքի հնչական շրջանում, որովհետև սրանք միևնույն պատմական ճանապարհն անցած լինելով՝ ենթարկվեն համերաշխ օրենքներին։ Օտարամուտ բառերը եթե միջամտեն ուղղագրական կանոններ մշակելիս, առաջ կբերեն շփոթ, քանի որ ծագում են ուրիշ լեզվական և հնչական մթնոլորտից և իրենց հատկությամբ կարող են հաճախ անմարսելի լինել հյուրընկալող լեզվի համար։

Ուրիշ ազգեր բնավ հոգս չեն անում օտար բառերը ճշգրտօրեն արտասանելու, այլ հնչում են այնպես, որպես ներում է իրենց սեփական լեզվի կարողությունը։

Մեզանում ևս փոխառյալ բառերը, եթե միայն պատահական անցորդներ չեն, այլ ընդունվում են որպես մնայուն բնակիչներ մեր լեզվի շենքի մեջ, պետք է համակերպվեն և ենթարկվեն մեր լեզվի օրենքներին, այսինքն հայանան։ Երբ որ օտար բառը ժողովրդի բերանից է անցնում գրական լեզուն, նա իրոք նախապես տաշվում է և հայտնում, ինչպես եկեղեցի, հույն *εχλαγαν* բառը, որ դասական օրինակ է օտարի հայացման։ Բայց եթե միջնորդը գրականությունն է, օտարը մնում է անձեռնմխելի իր տարազի մեջ։ Շատ անգամ արդեն հայացած բառը նորեն օտարանում է գրականի գրչի տակ կամ բերանում։ Գրիգորը դառնում է Գրիգորիոս, Գրիգորիս, նույնիսկ Արիստակը՝ Արիստակէս։ Կարծում եմ, այսօրինակ բժախնդրությունը բոլորովին խորշելի է։ Ֆրանսիացին կարող է արտասանել ոուս-հայ չ, ց տառը, բայց գերադասում է նեղություն շտալ իր լեզվի կապանքներին և Черновик արտասանում է շերնովիչ։ Բայց մենք ուզում ենք, որ ոուսերեն Горький հայն արտասանեն Դորկիյ, ծամածոնելով իր լեզուն, մինչդեռ եվրոպացիք բավականանում են՝ Горки ձեռով, որ և հարմար է մեր լեզվին։

Ինձ թվում է, որ օտար բառերը ուղղագրության մեջ առանձին գլուխ պիտի կազմեն, ուր մշակելու է տառադարձի կանոնները, հարմարեցնելով, որքան հնարավոր է, հայ հնչման և գրի ոգուն։ Ուստի կուզեի զատել օտար բառերի գրության հարցը և քննել առանձին այն շափով, որքան շոշափված է Հանձնաժողովի աղյուսակի մեջ։

Ամենակարևորը օ և Ե գրերի տառադարձի խնդիրն է, որ կատարյալ րմահաճույթի նյութ է դարձել գրողների գրչի տակ: Շատերը խարվելով օտար օ-ի և հայերեն օ (=աւ)-ի նմանությունից, գրում են ամեն տեղ օ: Ուրիշները կարծելով, որ և-ի հնչյունն է յե, օտար Ե ամեն տեղ դարձնում են է:

Հանձնաժողովի սահմանում է գրել՝ բառամիջում ո և և ըստ 4 և 9 կետերի, բառավերջում ո և է ըստ 19 և 3 կետերի և բառասկզբում օ և է ըստ 1 և 7 կետերի: Այս կանոնը շատ որոշ է և ընդունակ է վերջ դնելու խառնակ գրություններին: Եթե հայ բառերի վերաբերմամբ այս կանոնը վիճելի է ինչ ինչ կետերում, օտար բառերի համար անխոցելի է: Թեև սկզբի և և ո, ինչպես և վերջի է կարող են առարկության նյութ լինել: Որպեսզի է և օ գրերը, որ զուտ հայկական ծագում ունին, կարելի լինի պահել սահմանափակ շրջանում, համաձայն Հանձնաժողովի անթաքուստ տրամադրության, արդյո՞ք ներելի չէ օտար բառերում ամենուրեք և և ո գրել, անդամ բառի սկզբում:

Ինու լեզուն մի կետում նման է մեզ. սկզբի Ե արտասանում է յե, մի հատիկ բառ ունի Ե-ով ЭТО. ոչ միայն սլավոններենում, այլև մոտիկ անցյալ ռուսներենում ընդունված էր հունական և արտահայտել Ե-ով: Ցայժմ էլ գրում են епархия, Евлогий, епископ, Евлампий, Евграфий, սլավոն լեզվի աղղեցություն, առաջները գրում էին Ератосфен, Евклид, Епаминонд, Епикур. այժմ եվրոպական, գլխավորապես գերմաներենի հետևություններ Եратосфен, Эвклид և այլն:

Մեր նախնիք էլ գրում էին նկեղեցի, եպարքոս, եպիսկոպոս, Եղևսա, Եղիսէ, Եփեսոս, Ետիքէս, Ելամպիա և այլն: Հանձնաժողովի պատվիրում է այժմ գրել էվտիքէս, էվլամպիոս, էվրիպիտ, կամ եթե վեր տեղ և գրենք՝ էւրիպիդ, էւկլիդ:

Թվում է թե անպատեհություն չկա բառասկզբում ևս գրել և. կանոն դնելով, որ օտար բառերում սկզբի և հնչվում է որպես է, առանց խորշելու, եթե ամանք կարտասանեն յե: Այժմ անհարմարություն չեն զգում վերև բերած բառերի հին արտասանությունից՝ եպիսկոպոս, փոխ. էպիսկոպոս, Եղևսա փոխ. էղևսա:

Չպետք է մոռանալ, որ եչի յե արտասանությունը գրական պատվաստ է և հատուկ է դրական լեզվին, ինչպես և ո-ի ՎՕ հնչյունը: Կենդանի բարբառները ավելի ազատ են և ընդհանուր առմամբ շատ ավելի խուսափում են յե-ից և ՎՕ-ից, քան սիրում: Կան բառեր, որոնք այս կամ այն բարբառում արտասանում են յե, ՎՕ, բայց գրեթե չկա մի բառ, որ բոլոր բարբառների մեջ ունենա յե կամ ՎՕ հնչյունը անպայման: Անգամ ևս դերանունը Թիֆլիսի բարբառում՝ իս է: Երևս, երեք, երեկ, երազ, երանի, երզում, երկաթ, երկանք արտասանվում են՝ էրևս կամ իրևս, իրեք, էրեկ, արազ, հրենակ (=երանեակ), օրդում-էրդում, արկաթ, արկանք, և այլն: Նմանապէս՝ օսկի, Թիֆլիսը՝ օսկի, ողորմի, օղորմի կամ դորմի, այլև ըղորմի, ոչխար=օչխար, որթ=հորթ, ոսպն=հոսպր, ոջիլ=հոյիլ, ոլորեմ=հոլորեմ, ողնի=կոզնի և այլն:

Գլորոցի և գրականության շնորհիվ է, որ շարաբախտ յե և ՎՕ հնչյունները ընդհանրացել են: Կարծում եմ, հմուտ և բանիբուն ուսուցիչները վերջ պիտի տան դպրոցական բանության և թողնելու են աշակերտներին իրենց անհատական արտասանությունը:

Եթե մայրենի բառերում և և ո կարող են հնչվել ըստ ջանկության, Ե և Օ կամ յե և ՎՕ, կարծում եմ, որ օտարոտի չպիտի թվա նաև օտար բառերում:

սկիզբը գրել՝ Ն և ո, երկկերպ արտասանությունը հավասարապես ընդունելի համարելով. ուրեմն էկոպերտ, Եդմոնդ, Ետրուակ, Որմիղդ, Ոդիսևս, Որիգեն, Որեստ կամ Ովրեստ, Որիոն կամ Ովրիոն, ինչպես և Որդսն, ոպերաց(իա), կո-(ո)պերաց(իա) և այլն:

Այս հանգամանքը, որի վերա պնդել չեմ ուզում, այն առավելությունն ունի, որ կրճատում է օ և է գրերի գործածությունը և նախապատրաստում նրանց վտարումը և հայերեն բառերից, որոնց քանակը մեծ չէ: Երկուսից մեկը՝ կամ հայ գրագետը չի կարող արտասանել բառերի սկզբում հստակ օ և e, այլ ո և ye, այն ժամանակ այդպես պիտի վարվի և օտար բառերի հետ կամ կարող է արտասանել, ապա կարիք չկա կանոն դնելու, որ ո և է բառասկզբում դառնում են ո և ye:

Այս բացատրություններից հետո պարտքս լիովին կատարած չէի լինի Հանձնաժողովիդ հանդեպ, եթե լռությամբ անցնեի նաև այլ կարգի մի հանգամանք:

Արևմտյան հայությունը միշտ պահպանողական է եղել լեզվի խնդրում և ավանդապահ: Ներկա ցան և ցրիվ գաղութները, որ նրա բեկորներն են, պահում են իրենց նախկին տրամադրությունները: Այնքան կորուստներից և տապալումներից հետո, հայրենազուրկ հայությունը սարսուռով է նայում ամեն մի փոփոխության, որ շոշափում է լեզուն, եկեղեցին և մյուս ավանդները:

Նոր ուղղագրությունը համակրության նշույլ անգամ չգտավ սահմանից դուրս և անգամ անհատական հետևողներ չունեցավ: Կասկած չկա, որ Հանձնաժողովիդ աշխատանքը իր շեղումներով նույն բախտին է արժանանալու: Հրամաններն ու սաստերը այս դեպքում անզոր են և անհետևանք:

Խորապես ցավելու է, եթե այն պահին, երբ հայրենիքն իր կառավարչական և հասարակական ուժերով ջանալու է իրեն քաշել աշխարհալած զավակները, ուղղագրության խնդիրը նոր անջրպետ հանդիսանար և փոխանակ մերձեցնելու երկու գրական լեզուները, ուղղագրական սեպով ընդլայներ եղած պառակտումը:

Հայ գրական աշխարհի երկփեղկումը ավելի մեծ աղետ է, քան ուղղագրության խոստացած բարիքը: Ուղղագրությունը ի վերջո պայմանական խնդիր է և ամեն ուղղագրություն ընդունելի է, եթե հանրության կարծիքն ու հավանությունը շահած է:

Հասարակական պայմանները պարտադրում են ուղղագրական հարցը հրապարակ հանել առանձին ղգուշությամբ:

1) Նորալուր ուղղագրությունը... ջնջելու է իսպառ և վերականգնելու ավանդականը: Այս անկասկած է:

2) Հանձնաժողովիդ վերաքննության վերջնական արդյունքը, ինչ և լինի, չպիտի ունենա ստիպողական հանգամանք. Պետությունը ևս իր հեղինակությունը անխոց պահելու համար ձեռնպահ պիտի մնա վաղաժամ միջամտությունից: Հանձնաժողովիդ աշխատանքը պետք է հայտարարվի իրրե ուսումնական գործ, պատրաստված հեղինակավոր մարմնի կողմից, որպես հանձնարարելի սրբագրություն ավանդական ուղղագրության: Գրական աշխարհին է թողնելու վերջնական վճիռը: Ուղղագրությունը միայն մասնագետների գործ չէ, այլև համայն մտավորականության, ընթերցող և գրող հասարակության: Սա է իսկական սպառողը մշակած նյութի: Հանրության վերաբերմունքը կորոշէ գործի ելքը և հաջողության թե ձախողանքի չափը:

3) Որպեսզի հասարակությունը գիտակցորեն վերսրբեր անձնաժողովիդ աշխատանքին, անհրաժեշտ է հրատարակել մի ժողովածուի մեջ բոլոր այն գեկուցումները և թիրեղեմ կարծիքները, որոնք արտահայտված են հարցի շուրջը և մանավանդ այն հիմքերը, որ բերել են անձնաժողովիդ որոշ եզրակացություն:

Տառերի ձևի բաժնիվտխություն

Կուզելի մի քանի խոսք ասել նաև այս հարցի մասին:

Տառերի վայելչության խնդիրը ինձ զբաղեցնում էր վաղուց: Հետաքրքրությունս միայն տեսական չէ եղել: Գործնական քայլեր էր արված և փայփայած ծրագիրս մարմնանալու վրա էր, երբ Քաղաքական հորիզոնները մթագնեցին և իմ գործս զոհ գնաց անհայտության:

Ողբացյալ բարեկամս, հայտնի նկարիչ Վարդգես Սուրենյանցն էր համակիր և անձնվեր աշխատակիցս: Նոր տառերն արդեն պատրաստ էին և հանձնված մայրաքաղաքի ձուլարաններից մեկին՝ մայրեր կտրելու համար: Մի բարի մարդ հանձնառու էր եղել հոգալու բոլոր ծախսերը և անմիջապես վճարել էր մոտ ութ հազար ութսու առհավատչեք:

Տառերի մեծագույն մասը արդեն ձուլված էր: Բոլոր ջանքերն իզուր անցան:

Ի՞նչ էր իմ հայացքս տառերի ձևափոխության մասին: Մեր գրերի զլխավոր թերությունը եվրոպականի հետ համեմատած այն է, որ բավականին մարմնեղ չեն, փոքր իրան ունեն և երկայն վերջավորություններ:

Հին դիրքը, որ անվանում ենք երկաթագիր, այլ նկարագիր ունեւր: Հույն և լատին տպագիրը շատ ավելի հարազատ իր երկաթագրին, քան մեր բոլորգիրը (որ և մեր տպագիրն է)՝ մեր երկաթագրին: Հական զանազանությունն այն է, որ լատին և հույն գրերը, հին թե նոր, ամփոփվում են երկու զուգահեռ տողերի մեջ. ընդհանուր առմամբ: Միայն մի քանի տառեր դուրս են գալիս տողից վեր կամ վար:

Հակառակ ոճն ունի արաբական գիրը, որ շարվում է մի տողի վերաւ: Հայերեն տառերը բոնում են միջին տեղը, ոչ գեր են ինչպես լատին և հույնը և ոչ նիհար և վտիտ արաբականի նման, այլ միջին իրանով և երկար ու ձևով տառեր են: Այսպես՝

հույնը՝	ΜΑΚΡΟΒΥΤΑΤΟΣ	μακροβυτατος
լատինը՝	LIBERTAS	libertas
հայը՝	ԲԱՐԵԿԱՄ	բարեկամ
արաբը՝	السلام عليكم	السلام عليكم

Մեր հին բոլորգիրը շատ ավելի մարմնեղ էր և մոտ լատինական ոճի, քան հետագա գրերի գիրը: Ձեռագիրների համեմատությունը այն տպավորությունն է թողել վրաս, որ Արևելյան Հայաստանի, մասնավորապես Այրարատյան վանքերի գիրը զգալի զանազանություն ունեւր Կիլիկյան գրությունից: Արևելյան տառերը գեւ են և խոշոր, ոլորում գծերով, մինչդեռ Կիլիկյան ձևագիրները սիրում են ընդհանրապես փոքրադիր և ուղղանկյուն տառեր:

Ափսոս որ ձեռքիս տակ չունեմ զեթ Գարեգին վրդ-ի հրատարակած նմուշները, որ օրինակներով պարզեմ միտքս: Գուցե հետևյալ փորձը մի թեթեւ հասկացողություն տա շեշտած տարբերության մասին:

Արևելյան գիր՝

Վառք հաւր և որդւոյ
դու և հոգւոյն սրբոյ

Կիլիկյան՝

Վառք հաւր և որդւոյ և հոգւոյն
սրբոյ ամէն

Այս մանր բոլորգրից զարգսնում է հետագայում նոտրգիրը, անշուշտ մուսուլման գրի ազդեցութեան տակ՝

Վառք հաւր և որդւոյ և հո-
գւոյն սրբոյ ամէն.

Հայ անդրանիկ տպագիր տառերը, որ կտրվեցին Եվրոպայում, թվում է թե ավելի մոտ էին Արևելյան բոլորգրին։ Մխիթարյան տպարանները գերադասություն տվին Կիլիկյան ոճին և ժողովրդականացին։

Արդ գոնե իմ ծրագրած ձևափոխությունը մոտենում էր Արևելյան բոլորգրի ոճին, մինչ այսօրվա ընդունված տպագիրը հավատարիմ է Կիլիկյան ոճին։

Մեծացնելով տառերի իրանը, մեծանում է նաև նրանց ծավալը, որ ցանկալի չէ։ Ամբողջ դժվարությունը կայանում է նրանում, որ տառերը բարեփոխել այնպես, որ այս ներհակ պահանջներին գոհացում տա—խոշոր իրանով, բայց ոչ մեծ ծավալով և հավատարիմ ավանդական գծագրության։

Նկարիչ Վ. Սուրենյանցին տրված էր հետևյալ հրահանգները, որով պիտի առաջնորդվեր նոր տառեր գծելու համար։

1. Նախ տառերը պիտի լինեն ուղղաձիգ, նման եվրոպականին և ոչ թեք, ինչպես ընդունված է մեզանում, որ ցանկալի չէ ամենից առաջ աչքի առողջապահ տեսակետից։

2. Տառերը պետք է լինեն փորավոր, մարմնեղ, բայց կտրճ պոչերով։

3. Գծերը՝ նուրբ և բաց, նման եվրոպական տպագրին և ոչ սև, հաստ, ինչպես ընդունված է մեզանում։

4. Գծերը պետք է միանան ոչ ուղղանկյունով և ոչ կամարով, այլ միայն կոր անցումով։

Այսինքն ոչ՝ ա ո ե ղ

և ոչ զլոր՝ ա ո ե ղ

այլ միայն՝ ա ո ե ղ

5. Տառերի ծավալը. բռնած տեղը աշխատելու է որ հավասար լինին, ուստի առանձին հոգ տանելու՝ վ, զ, խ, զ, պ, ա և նման լայնանիստ տառերի գծագրությունը բարեփոխելու, առանց վնասելու նրանց ավանդական պատկերին։

Այսպես՝

Ե Բ Դ Ո Ո Ի

Կ Ս Վ Մ Ի

Այս պահանջներից շատերը նախատեսված են Արամյան և Այտնյան կողմից (moderne) տառերի գծագրության մեջ: Բայց սրանց թերությունն այն է, որ շղագիր բնավորություն ունին (курсив) իրենց մագալին գծերով: Նաև տառերի ձևը բավականին գեղեցիկ չեն:

Հանգուցյալ Վ. Սուրենյանցը ամբողջ տարի աշխատեց այս գործի վերաբերյալ տախտակներ պատրաստեց մեծ դիրքով և հետո լուսանկարում էր ավելի փոքր և պեսպես մեծությամբ: Փորձերը քննում էինք միասին և մտնում ուղղումներ:

Վեղապես հաջողեցինք. նորակերտ տառերը բոլոր եղած պահանջների լիակատար մարմնացումն էին: Վարդգեսի տաղանգը այն հատկությունն ուներ, որ ողողված էր անհուն սիրով և կարոտով դեպի ամեն ինչ, որ հայրենի էր: Շնորհիվ այս հանգամանքի նա իրոք հրաշալի գործ արեց: Ինչպես ասացի, հերթն արդեն ձուլարանին էր, և հույս ունեինք, որ շուտով ծրագրած հրատարակչական մեծ ձեռնարկը իրագործել կսկսենք:

Պատրաստել էինք Հաղարան բլրույր. բնագիրը ինչ ինչ մշակման ենթարկել, սրբագրել լեզվի և բովանդակության կողմից, հարմարեցնելով մանկական ընթերցանության: Հանգուցյալը պատրաստել էր զարդանկարներ, որոնք ընդհանուր ցուցահանդեսում անգամ գովեստի արժանացան:

Հաղարան բլրույր նորակերտ տառերով, աննման գեղարվեստական պատկերներով պիտի լինեին մեր հրատարակության երախայրիքը: «Բայց ավստոս, որ երազ էր»: Կա մի անողոր բան, որ ծանրանում է մեր բոլոր տենչանքների և գործերի վերա, հետապնդում և ձախողում մեծը. թե փոքրը, կարևորը թե չնչինը. թողնելով անփարատելի կսկիծ:

Ն. ԱԴՈՆՑ

ЗАМЕТКИ Н. АДОНЦА ОБ АРМЯНСКОЙ ОРФОГРАФИИ И ШРИФТАХ

П. О. АКОПЯН

(Резюме)

Публикуемые заметки известного арменоведа Николая Адонца (1875—1942) относятся к 1927 году. Они явились ответом на анкету Комиссии по реформе орфографии и шрифтов Института науки и искусства Армянской ССР. Особое внимание привлекают замечания ученого относительно исторической фонетики армянского языка и транскрипции заимствованных слов в грабаре, а также его аргументация в пользу традиционной орфографии. В статье раскрыты существенные стороны исторического развития и взаимовлияния армянских букв. Далее автор показывает, что он совместно с выдающимся армянским художником В. Суреньяном в 10-е годы создал новые шрифты, которыми была набрана сказка «Азаран блбул». В ней содержатся также сведения о созданных по мотивам этой сказки иллюстрациях Суреньяна.